յիս ելեալ ասա եկաք. և երեկոյիս ի կիրակամուտ գնացաք ի տուն Պակէ։

Կիրակի ԺԷ-ի՝ գնացաք յՈւսկիւտարն մօտ Վարդապետն և զիշերիս ի հարանիք Պօղոսի քուրջն գնացաք և եկաք մօտ ի Վարդապետն։

Եւ Դշի (19 Դեկտ.) ապա եկաք ի տեղիս մեր և զՎարդապետն մեծաւ պատուով առեալ տարան ի Սուրբ Աստուածածնայ եկեղեցին։

Եւ այգուցս Դշի (20 Դեկտ.) ի Սուրբ Նիկողայոս բերին։

Շաբաթ օրս (23 Դեկտ.) տօն Դաւթայ մարգարէին և Յակոբայ Արդարոյն։

Կիրակի ԻԴ-իս։

Եշիս (28 Դեկտ.) բարեկենդան Ծննդեան։

Կիրակի ԼԱ-իս՝ Գաբրիէլին մեր աղջիկն մեռաւ։

(ՌՃԴ = 1655)

Յունվար ամիս օր Բշի. Կաղանդ և Նոր Տարի։

Ե-ին օր Զշի. երեկոյիս ճրագալուց. ի Սուրբ Նիկողոս էաք. Վարդապետն պատարագեց։

Այգուցս Զ-ի օր Շաբաթ. տօն Յայտնութեան Քրիստոսի։

Բշի օրս (8 Յունուար) Առաջնորդն զմեր Վարդապետն ի պատիւ տարար յԱստուածածին։

Ուրբաթ (12 Յունուար). զփուռս աւրհնել գնացաք։

Շաբաթի օրս (13 Յունուար) Տէրտէրն գնաց ի Թօփղափուն՝ Տէր Ղազարի փեսի յընթրիսն։

ԺԴ-իս օր Կիրակի։

Գշի (16 Յունուար). մեր Մինաս պալէ մօրքուրն